ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
ՀՀ ԶՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ

АРМЯНСКАЯ АПОСТОЛЬСКАЯ ЦЕРКОВЬ
ВЕРХОВНЫЙ КАПЕЛЛАН ВС РА

# ՇՆՈՐՀԱՎՈՐ 50 ԱՄՅԱԿ

**Արժ. Տեր Զարեհ Ավագ Քհն. Զարգարյան**
**Տորոնտոյի Ս. Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ**

Արժանապատիվ Տեր Հայր,

Ձեր ծննդյան տարեդարձի առթիվ՝ մեր ջերմագին շնորհավորանքները և լավագույն բարեմաղթանքներն ենք բերում:

Առանձնակի գնահատանքի է արժանի Ձեր կյանքի երկար տարիների անմնացորդ նվիրումը և ավանդը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու անդաստանից ներս հոգևոր կյանքի զարգացման, կայացման ու հզորացման ճանապարհին:

Ուրախ ենք, որ այսօր էլ նույն գործարժան հավատարմությամբ, նվիրվածությամբ և պատասխանատվությամբ շարունակում եք ծառայել հայրենիքից հեռու՝ Ձեր նպաստը բերելով Հայոց եկեցուն, հոգևոր հարուստ գիտելիքներն ու սերը փոխանցելով հավատավոր մեր ժողովրդին:

Սիրելի Տեր Հայր, անուրանալի է նաև այն փաստը, որ պատերազմի դժվարագույն օրերին Դուք և Ձեր ծխական համայնքը մշտապես նեցուկ և հենարան եք եղել հայրենիքին և Հայոց Բանակին:

Մշտամնա աղոթքով առ Աստված՝ մաղթում ենք Ձեզ կենաց երկար և արևշատ տարիներ, անխափան քաջառողջություն, ուժ, կորով և հարատևում եկեղեցանվեր Ձեր վեհ ծառայության մեջ:

Աղոթքով և եղբայրական ջերմությամբ՝

Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյան
ՀՀ ԶՈՒ Հոգևոր Առաջնորդ

01 մայիսի, 2016